

«ԱՍՈՐԱԿԱՆ» ԿԱՄ «ԱՍՈՐԱ-ՀՈՈՄԵԱԿԱՆ» ԿՈԶՎԱԾ
ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ ԱՂԵՐՍԸ
ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԵՏ

Ս. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գիտության մեջ «Ասորական» կամ «Ասորա-հոմեական» կոչված դատաստանագիրքը տակավին մնում է չզնահատված հայ իրավունքի պատմության համար:

Բրունսը և Ջախաուն 1880 թ. հրատարակում են „Syrisch-römisches Rechtsbuch aus dem fünften Jahrhundert“¹ արժեքավոր աշխատությունը, որն ընդգրկում էր ասորական լեզվով գրված, ըստ հեղինակների, V դարի վերջին քառորդի մի դատաստանագիրք (լոնդոնյան ձեռագիր), նույնի փարիզյան տարբերակը (1269 թ. գրչություն), դատաստանագրքի արաբական և հայկական խմբագրությունները (1408 և 1739 թթ. գրչություններ), բոլորը՝ գերմաներեն թարգմանությամբ, հոգվածների մեկնություններով և հետազոտությամբ: Նրանք դատաստանագիրքն անվանեցին «Ասորա-հոմեական», քանզի գտնում էին, որ այն ստեղծված է ասորիների և հույների իրավական հարաբերությունները կարգավորելու համար: Այդ տեսակետը պաշտպանեց Միտտայսը²: Գերմանացի գիտնականների մի մեծ խումբ՝ Լինգենթալ, Մյուլլեր, Կոհլեր, Ապտովիտցեր, Կարստ և այլք, չպաշտպանեց այդ կարծիքը, հիմնավորելով, որ դատաստանագիրքն ունի ասորական և փոքրասիական ծագում³: Ի. Ռայթը գտնում է, որ Ասորական դատաստանագրքի հնագույն (լոնդոնյան) ձեռագիրը պատկանում է VI դարի առաջին կեսին և թարգմանված է հունարենից⁴:

Ռուս անվանի գիտնականներ Ի. Ա. Պոկրովսկին, Ն. Վ. Պիգուլևսկայան, Ի. Ս. Պերետերսկին, Ջ. Վ. Ուդալցովան և այլք⁵ գտնում են, որ «Ասորական» կամ «Հոմա-ասորական» օրինագիրքը քաղաքական (կոմպիլյատիվ) գործ է: Նրա համար աղբյուր են եղել առավելապես արևելյան կայսրերի հրամանագրերը և դասական իրավաբանների առանձին ստեղծագործությունները: Այն

¹ Karl Bruns und Eduard Sachau, Syrisch-römisches Rechtsbuch aus dem fünften Jahrhundert, Leipzig, 1880: Այսուհետև՝ SRR:

² L. Mitteis, Reichsrecht und Volksrecht in östlichen Provinzen des römischen Kaiserreiches, Leipzig, 1891.

³ «Ասորական դատաստանագիրք», ձեռագրերի համեմատությամբ լույս ընծայեց Արսեն Ղլտճյան, էջ 8-10: Այսուհետև՝ ԱԴ:

⁴ P. Райт, Краткий очерк истории сирийской литературы, перевод с английского К. А. Тураевой, СПб., 1902, էջ 66:

⁵ И. А. Покровский, История римского права, Петроград, 1915, էջ 232—233: Н. Пигулевская, Месопотамия на рубеже V—VI вв. н. э., М.—Л., 1940, էջ 37: И. С. Перетерский, Дигесты Юстиниана, М., 1956, էջ 21, «История Византии», т. I, М., 1967, էջ 59:

իրենից ներկայացնում է մինչհուստինիանոսյան իրավունքի ժողովածու, հունարենից ասորերեն է թարգմանվել V դարի վերջին քառորդում: Իսկականը մինչ այժմ չի գտնված, բայց ասորական ձևագրերի վերջաբանից իմանում ենք, որ թարգմանությունը կատարված է հռոմեականից, այսինքն՝ հունարենից:

Այս առաջնակարգ հուշարձանը չի վրիպել հայ գիտնականների տեսադատից⁶: Մենք իրավացի ենք գտնում Կ. Բասմաջյանի և հայագետ Յոզեֆ Կարստի⁷ այն հետևությունը, որ Ասորական դատաստանագրքի թարգմանությունը ներսես Լամբրոնացու անվան հետ կասկելը արդարացի չէ: Այն Հայաստանում գործել է Լամբրոնացուց շատ առաջ: Լամբրոնացու հիշատակարանի համապատասխան մասում ասված է. «Եւ կարի վշտացեալ հայրապետն խնդիր առնէր առ այլ ազգս. և պատահեալ անդ յասորոց Թէոդոս անուն կիրթ յիմաստութեան քահանայ, յայտնեաց տեառնս զի զոյր առ ինքն այս համառուտ արինադրութիւնս (ընդգծումը մերն է— Ս. Հ.), և հրաման տուեալ ինձ տառապեալ իւր ձեռնասուն որդւոյ ներսեսի յեղաշրջեցաւ ի հայս... Յետ որոյ ապա և ի հելլենացւոց զրոց արարի թարգմանութիւն մովսիսական արինացդ և Լէոնի և Կոստանդեայ արինացդ, ի նմանէ թարգմանեցի և զղինուորական արէնքդ»: Հենվելով հիշատակարանի «համառուտ արինադրութիւնս» արտահայտության վրա, Բասմաջյանը արդարացիորեն նկատել է, որ դա և Ասորական դատաստանագիրքը միևնույնը լինել չեն կարող, որ այդպիսին հանդիսանում է «Համառուտ ժողովումն արինացս վերստին»-ը: Եվ իսկապես՝ վերջինիս հոգվածները համառոտագրված են և խորագրի նմանությունը ակնհայտ է: Ավելացնենք նաև, որ Ասորական կոչված դատաստանագրքի հայկական տարբերակների հոգվածները և նրանց ընդհանուր թիվը ամենևին էլ համառոտագրված չեն:

Ասորական դատաստանագրքի մասին հետաքրքիր մտքեր են հայտնել Ա. Ղլտճյանը, Խ. Սամվելյանը, Ա. Սուքիասյանը և Ա. Թովմասյանը⁸: Նրանք դտնում են, որ Ասորական դատաստանագրքի հայկական խմբագրությունը թարգմանվել է ասորերենից և յուրացում-կիրառման (ռեցեպցիայի) ենթարկվել: Խ. Սամվելյանը գտնում է, որ «այդ դատաստանագիրքը համենայն դեպս ոչ թե XII դարում, այլ անհամեմատ ավելի վաղ պետք է մուտք գործած լիներ Հայաստան»:

Հայ գիտնականները դատաստանագրքի գնահատման գլխավոր խնդրում ունեցել են մեկ ելակետ. նրանք գտնում են, որ այն ունի ասորական ծագում⁹, և հայկական խմբագրությունները անուցող մայրը եղել է ասորականը: Սակ

⁶ Գարեգին Զարպիսյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 750—755: Կ. Բասմաջյան, Հայկական իրավունքի սկզբունքները մինչև մեր օրերը, «Բանասեր», 1901, պրակ Դ, էջ 68: Հայկական օրենք Կիլիկեցւոց, համառուտ ժողովումն օրինացս վերստին, «Բանասեր», 1907, պրակ Ա, էջ 14—18: Ն. Ակիսյան, Ակնարկ մը հայ իրավանց պատմության վրա և Յ. Կարստի նոր երկասիրությունները, «Հանդես ամսօրյա», 1908, № 1—2, էջ 39: Н. Адонц, Армения в эпоху Юстиниана СПБ, 1908, էջ 191:

⁷ Josef Karst, Grundriß der Geschichte des armenischen Rechtes, 1, Stuttgart, 1906, էջ 27—28:

⁸ ԱԴ, էջ ԺԲ: Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, Ե., 1939, էջ 62: Ա. Բ. Թովմասյան, Հին և միջնադարյան հայ բրեհական իրավունքը, Ե., 1962, էջ 96—98: А. Г. Суканасян, Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма, Е., 1963, էջ 139:

թվում է, որ այս եզրակացությունը ասպարեղ չէր գա, եթե շանտեսներ դերմանացի հայտնի գրտնական լինեցենթալի և այլոց այն կարևոր հետևությունը, որ դատաստանագիրքն ունի նաև վտերասիական ծագում և գործի վերածվեր իս. Սամվելյանի այն արդարացի պնդումը, թե «այս կնճոռոտ հարցի լուսաբանությունը և վերջնական լուծումը հնարավոր է միայն թե՛ հայերեն և թե՛ ասորերեն գրչագիր օրինակների հիմնավոր բաղդատությունից և համեմատական ուսումնասիրությունից հետո»⁹:

Մեր հետազոտությունը հեռու է դատաստանագրքի մասին վերջնական խոսք ասելու դիտավորությունից: Դա հնարավոր է անել «Արէնք յաղթող թագաւորաց քրիստոնէից՝ Կոստանդիանոսի, եւ Թէոդոսի, եւ Լեւոնի թագաւորաց հոռմակայեցոց» խորագիրը կրող հինգ տասնյակից ավելի հայկական ձեռագրերի գիտա-քննական բնագիրը կազմելուց և այն դատաստանագրքի ասորական խմբագրության գիտա-քննական բնագրի հետ համեմատելուց հետո միայն: Բայց քանի որ մեզ հաջողվել է Բրունսի, Զախաուի և Ա. Ղլաճյանի աշխատասիրությամբ հրատարակված դատաստանագրքի հայկական մի քանի խմբագրությունների, ինչպես նաև Մաշտոցի անվան մատենադարանի նույն դատաստանագրքի XIII—XIV դդ. մի քանի հնագույն ձեռագրերի (ձեռ. №№ 485, 488, 556, 2593) և ասորական հնագույն լոնդոնյան ձեռագրի հոգվածները ենթարկել զուգահեռ համեմատության, ուստի ընթերցողի դատին ենք ներկայացնում մեր ուսումնասիրության արդյունքները¹⁰:

* * *

Դատաստանագրքի ասորական և հայկական տարբերակները հետազոտված են միանգամայն անհավասար չափերով: Բրունսի և բազում այլ գիտնականների ուշադրությունը կենտրոնացված է եղել ասորական տարբերակի վրա, որը տվել է իր դրական արդյունքը՝ նրանց հաջողվել է գիտականորեն հիմնավորել, որ ասորական հուշարձանը թարգմանվել է հունարենից՝ V—VI դարերում: Դատաստանագրքի հայկական տարբերակը առ այսօր չի ենթարկվել հիմնավոր հետազոտության: Տակավին բացատրված չեն դատաստանագրքի հայկական տարբերակը կազմվելու ժամանակն ու շարժառիթները և այն, թե որ լեզվից է դատաստանագիրքը թարգմանվել հայերեն:

Մեզ հետաքրքրող դատաստանագրքի հայկական, ասորական և արաբական տարբերակների իրավագիտական համեմատությունը ցույց է տալիս, որ նրանցից մեկն անկասկած նեցուկ է եղել մյուսների համար: Բայց ո՞րն է աւղմեկը: Այս կարևոր խնդիրը պարզաբանելու գործում զլխավոր խոսքը, լեզվական հանգամանալից համեմատությունից ու բաղդատությունից հետո, պատկանում է դատաստանագրքերի հայկական և ասորական տարբերակների արժեքավորմանը ըստ իրավական ձևի (դատաստանագրքի համակարգը, հոգվածների կառուցվածքը և ընդհանուր թիվը, հոգվածների միացումները, բաժանումները, պարզեցումները, լրացումները և այլն) և իրավական բովանդակության՝ հասարակական ինչպիսի հարաբերություններ և ինչպես են կարգա-

9 Խ. Սամուելյան, Նշվ. աշխ., էջ 62—63:

10 Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ասորագետ Հայկ Մելքոնյանին՝ դատաստանագրքի լոնդոնյան (ասորական) ձեռագրից օգտվելու գործում մեծ օգնություն ցույց տալու համար:

11 Հանդես, № 2

վորում դրանք, նրանց տարբերությունը ըստ կարգավորման առարկայի և ներգործության միջոցների:

Թեև մոտավորապես նման բնույթի ուսումնասիրություն (ասորական տարբերակի տեսանկյունից միայն) կատարել է Բրունսը, բայց նա չի փորձել ասորական տարբերակը ուսումնասիրել հայկականի տեսանկյունից:

Ամենից առաջ նշելի է, որ այս դատաստանագրքերն անհամապատասխան են հոգվածների թվով: Ասորեները բաղկացած է 127, իսկ հայերենը՝ 152 հոգվածներից: Մեր ուսումնասիրությունից կարելի է այն հետևությունն անել, որ այդ տարբերությունը գոյացել է հիմնականում երկու զլխավոր պատճառներից: Առաջին (որ ավելի նախնական է թվում մեզ)՝ դատաստանագիրք կազմողները նպատակ են ունեցել հոգվածների թվով տարբերվել միմյանցից: Դրա համար նրանք իրար են միացրել մի շարք հոգվածներ: Ասորեներն դատաստանագրքում նկատում ենք ութ տարբեր բնույթի միացումներ, որոնցից երեքը ուղղակիորեն անթույլատրելի կցումներ են: Այսպես, դատաստանագրքի հայկական տարբերակի երկու կամ երեք հոգվածները ասորական տարբերակում միացված են մեկ հոգվածի տակ. 1, 2 և 3 (մի մասը)=1, 17 և 18=21, 21 և 22=39, 34 և 35¹¹=113, 46, 47 և 49 (կոմբինացված և կրճատումներ)=92, 60 և 61=43, 74 և 75=48, 107, 108 և 114=71:

Հայկականի 1, 2 և 3 (մեծ մասը) հոգվածները ասորականում միացված են առաջին հոգվածի տակ: Արդարացված է այդ միացումը: Մեզ թվում է՝ միայն այնքանով, որ դրանք վերաբերում են օրենքի համաձայն ժառանգման իրավունքին: Հայերեն դատաստանագիրք կազմողները այդ հարաբերություններին արդարացիորեն նվիրել են առանձին հոգվածներ, քանզի նրանք կարգավորում են տարբեր մերձավորության ազգականների ժառանգության հերթականության հարցերը: Առաջին հոգվածի ուժով ժառանգական իրավունքներն առաջին հերթին փոխանցվում են որդիներին և դուստրերին, հորը և մորը, եղբորը և քրոջը: Երկրորդ հոգվածի ուժով (վերոհիշյալ ազգականների բացակայության դեպքում)՝ հորեղբորը և նրա որդիներին, քրոջ որդիներին, հորաքրոջ որդիներին: Իսկ երրորդ հոգվածի համաձայն՝ եթե չկան հայրական զծով վերոհիշյալ մերձավոր ազգականները, ժառանգության ընդունման են կանչվում կնոջ ազգականները: Այս միացման հետևանքով ասորական տարբերակի առաջին հոգվածը ընդունել է անսովոր մեծություն և ժառանգման իրավունքի համար խոցելի կառուցվածք:

Լոկ ձևականորեն է արդարացված նաև հայկականի 17 և 18-րդ հոգվածների միացումը ասորականի 21-րդ հոգվածի տակ (այնքանով միայն, որ վերաբերում են ժառանգրին): Բանն այն է, որ 17-րդ հոգվածը վերագրված է Կոստանդիանոս Մեծին, որը սահմանում է ծառային ազատելու կարգը՝ Կոստանդիանոսի, քրեպիսկոպոսի, բահանայի և երեցի մասնակցությամբ: 18-րդ հոգվածում չի հիշատակված Կոստանդիանոսի անունը և հոգվածը նվիրված է ազատվող ծառայի գույքային իրավունքներին, այսինքն՝ փոխվում է կարգավորման առարկան: Մենք էլ չենք խոսում այն մասին, որ հարկավոր էր զգուշություն դրսևորել այդ միացման ժամանակ, քանզի հոգվածների կցմամբ

¹¹ Հոգվածները բերվում են ըստ Մաշտոցի անվան մատենադարանի № 556 ձեռագրի (XII դար): № 556 ձեռագիրը պակասավոր լինելու պատճառով բերվում են № 488 ձեռագրի 34 և 35-րդ հոգվածները:

Կոստանդիանոսին է վերագրվել մեկ այլ հարաբերության իրավական կարգավորում:

Ասորական տարբերակում (հոդ. 39) կցված են նաև հայկական տարբերակի 21 և 22-րդ հոդվածները: 21-րդ հոդվածը նվիրված է ծառայի առուծախի, պործարքի պայմաններին՝ ծառան չպետք է լինի փախչող և արատ ունեցող, որպիսին 6 ամսվա ընթացքում կարող է վերադարձվել տիրոջը, իսկ 22-րդ հոդվածը՝ վաճառված ծառային տիրոջը վերադարձնելն արգելելու խնդրին:

Ասորական տարբերակի 113 և 48-րդ հոդվածներում միացված են հայկական տարբերակի ևս երկուական, այն է՝ 34—35-րդ և 74—75-րդ հոդվածները, առանց խմբագրական շոշափելի միջամտությունների: Այստեղ խիստ ուշագրավ է այն, որ այդ հոդվածները կցելիս ասորերեն դատաստանագիրք կազմողները թողել են նշանագիր հետքեր, որոնք թվում է թե վկայում են հայերեն դատաստանագրքի նախնական լինելու մասին: Այսպես, ասորական տարբերակում ընդունված կարգ է՝ երբ ավարտվում է հոդվածը, ի նշան այդ բանի հոդվածի վերջում դրվում են . . . կամ .0.0 նշանագրերը: Այսպիսի նշաններով է խորհրդանշված դատաստանագրքի համարյա բոլոր¹² հոդվածների ավարտը, որոնց թվում վերոհիշյալ 8 միացման դեպքերից՝ 6-ում: Սակայն ասորական տարբերակի 113 և 48 միացված հոդվածներից յուրաքանչյուրում այդ նշանագրերն օգտագործված են ոչ թե մեկական, այլ երկուական անգամ: Մեկ անգամ էր ավարտվում են հայկական տարբերակի 34 և 74-րդ հոդվածները, իսկ մյուս դեպքում՝ երբ ավարտվում են նրանց կցված 35 և 75-րդ հոդվածները: Մեր կարծիքով, այս հանգամանքը մտածել է տալիս, որ հոդվածների միացումը կատարել են ասորերեն դատաստանագիրք կազմողները:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում ասորական տարբերակի 43, 71 և 92-րդ միացված հոդվածները, որոնք իրավագիտության կողմից դատաստանագրքի համակարգմանը ներկայացվող պահանջների տեսակետից խոցելի և անընդունելի են ու չէին կարող տեղ գտնել դատաստանագրքում, եթե այլ աղբյուրներից այն ընդօրինակված չլիներ: Այսպես, ասորականի 43-րդ հոդվածում կցված են հայկական տարբերակի 60 և 61-րդ հոդվածները, որոնցից առաջինը սահմանում է մի բան, իսկ վերջինը՝ ուղիղ հակառակը: Ըստ 60-րդ հոդվածի՝ եթե ամուսինը կնոջ անվամբ կամ կնոջ համար գնում է գյուղ կամ այլ ինչ (ասորականում՝ «այլ ինչը» փոխարինված է «ծառայով»), ամուսնու հրամանով այդպիսին ճանաչվում է կնոջ սեփականությունը: Մինչդեռ 61-րդ հոդվածի ուժով՝ կնոջ անվամբ (որ վերցված է «ի կուսութեան») ամուսնու կողմից գնված գյուղը կամ ապարանքը (ըստ Բրունսի և Ջախաուի՝ դարդարանքը) չի դառնում կնոջ սեփականությունը: Կնոջ սեփականությունն է կազմում իր ընտանիքից ստացած ժառանգությունը, պոռյգը կամ այլ ինչը:

Մեղ թվում է, որ հայկական տարբերակի 107, 108 և 114-րդ հոդվածների միացումը ասորական տարբերակի 71-րդ հոդվածում ցույց է տալիս, որ ասորականը կազմողները հավանաբար հայկականից տարբերվելու նպատակով են այդ բանը կատարել: Նույնությամբ բերում ենք այդ հոդվածները.

«Ճէ. Մարդ եթէ դրկէ զիւր ընկերն, հրամայէ արէնքս դարձուցանել աչն-չափ ինչ ի նա, որչափ զրկանքն էր»:

¹² Մի բանի դեպքերում (տես 1, 38, 41, 42, 58 հոդվածները և այլն) հիշյալ նշանագրերի փոխարեն հոդվածի վերջում նշված են բազմակետ, երկու կետ (..) կամ պարզապես՝ կետ:

«ՃԸ. Թէ որ ասէ վասն մարդոյ, թէ սպանանող է և ոչ ցուցանէ առաջի դատաւորին, ինքն սպանւի. և զոր ինչ ասէ որ ի վերայ ընկերի իւրոյ անաւրէնութեան բան, և ոչ կարէ կեցցնել, որպէս կամի դատաւորն՝ պատուհասէ զասացաւոյն»:

«ՃԺԴ. Թէ բամբասէ մարդ զմարդ վասն պիղծ գործոց. շտայ իւր իշխանութիւն արէնքս վայրապար: Իսկ թէ բամբասողն կարէ կեցցնել զասացեալսն, համարձակէ: Ասպ թէ ոչ կարէ հաստատել, վղենկի»:

Ընթերցողը չի կարող չտեսնել, որ այս երեք հոգւածները կարգավորում են միանգամայն այլ և յուրատեսակ հասարակական հարաբերություններ և նրանց միացումը ընդհանրապես բացառւում է: Այնուհանդերձ ասորական տարբերակում նրանք միացւած են: Համարյա նույնատիպ միացում (հայկականի 46, 47 և 49-րդ հոգւածները) կատարւած է ասորական տարբերակի 92 հոգւածում, որի վրա մանրամասնորեն կանգ առնելը այլևս հարկ չենք համարում: Բայց և չենք կարող չնշել այն փաստը, որ այստեղ միացւած են տպահարդանը և ժառանգական հարաբերությունները կարգավորող անմիանալի հոգւածները:

Միամտություն կլինի կարծել, որ ասորերեն դատաստանագիրք կազմողները չէին տեսնում կամ չէին հասկանում, որ մեկ հոգւածի մեջ անկարելի է միացնել միանգամայն տարբեր հասարակական հարաբերություններ կարգավորող և միմյանցից ըստ էութեան տարբերվող վերոհիշյալ իրավանորմեր: Բայց քանի որ ասորերեն դատաստանագրքում միացման փաստն առկա է, մենք պետք է փորձենք գտնել այդ բանի արդարացումը կամ պատճառը: Մեր կարծիքով, առաւել հավանական է այդ փաստը բացատրել երկու պատճառաբանութեամբ. կամ ասորերեն դատաստանագիրք կազմողը այդ գործում եղել է անփորձ և չի իմացել դատաստանագրքին ներկայացվող ամենատարրական պահանջը (որը մեղ նվազ հավանական է թւում), կամ էլ նա եղել է փորձւած անձ, տեսել ու գիտակցել է այդ շեղումը և այդ բանն արել է ընդօրինակվող օրինակից տարբերվելու միտումով: Այս վերջինը մեղ առաւել տրամաբանական է թւում: Նախնականին ոչ հատուկ վերոհիշյալ հոգւածների միանգամայն անտրամաբանական կցումները կարծեք թե անուղղակիորեն վկայում են, որ նախնականը հայերեն դատաստանագիրքն է, իսկ ասորականը՝ նրա ծնունդը կամ տարբերակը: Թւում է, որ հայերեն դատաստանագրքից տարբերվելը այն իրական պատճառն է, որը հանգեցրել է հայկականի տասնինը հոգւածների միացումների՝ ասորական տարբերակի ութ հոգւածներում, առանց էական խմբագրական միջամտությունների (բացառություն է կազմում ասորականի 92-րդ հոգւածը): Այս է, մեր կարծիքով, հայերեն դատաստանագրքի և նրա ասորական տարբերակի հոգւածների թվի տարբերութեան առաջին պատճառը:

Երկրորդ էական պատճառը մեր կարծիքով այն է, որ հայերը և ասորիները, միմյանցից անկախ, ելնելով տեղական սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններից, իրենց դատաստանագրքերում ավելացրել են մի շարք նոր հոգւածներ: Բրունսը և Չախաուն գտնում են, որ ասորական տարբերակը պարունակում է 24 հոգւածներ, որոնք բացակայում են հայկականում, իսկ վերջինիս տեսանկյունով կատարւած մեր հետազոտությունների համաձայն՝ հայկականն ունի 34 հոգւածներ, որոնց երկվորյակը մեղ չհաջողվեց գտնել:

ասորական տարբերակում: Դրանք են՝ 28, 36, 37¹³, 44, 46, 47, 48, 50, 67, 83, 84, 86, 87, 90, 91, 93, 101, 102, 106, 110, 117, 118, 120, 121, 131, 143, 144, 145, 146, 147, 148, 149, 151 և 152-րդ հոդվածները:

Հայտնի է, որ օրենսգրքեր կազմողները մեծ ուշադրություն են դարձնում օրենսգրքի համակարգին: Վաղ միջնադարում նույնպես դատաստանագրքերի հոդվածները բնագրոսիկ չեն դասավորվել: Նրանք սովորաբար խմբավորվում էին ըստ կարգավորման առարկաների: Առավել կարևոր հասարակական հարաբերությունները դատաստանագրքերում իրավական կարգավորման են եղել թարկվում սովորաբար առաջին հերթին, նրանց տրամադրելով առաջին տասնյակ հոդվածները: Արդ, նույն պահանջները կիրառված են, արդյոք, հայկական և ասորական տարբերակներում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայկականի հոդվածներն ունեն համեմատաբար ավելի տրամաբանված համակարգում, քան ասորականը, թեև առաջինի համակարգումը հեռու է կատարյալ լինելուց: Այստեղ առավել կարևոր հասարակական հարաբերությունները կարգավորող հոդվածները համախմբված և համակարգված են: Այսպես, հայերեն դատաստանագրքի 1—15-րդ հոդվածները կարգավորում են մասնավոր սեփականության՝ ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգման իրավունքները: Այս հոդվածաշարքին չի մերվում 14-րդ հոդվածը, որը կարգավորում է ժառանգման իրավունքի հետ չառնչվող առուծախի հարաբերությունները: Ներքին տրամաբանական կապ է նշմարվում նաև այդ հոդվածների հաջորդականության մեջ: Նախ կարգավորվում են ըստ օրենքի ժառանգման խնդիրները, ապա՝ ըստ կտակի, իսկ հոդվածաշարքի վերջում՝ հոր հնազանդությունից դուրս եկած զավակի ժառանգման իրավունքները (հոդ. 15) և կտակով ծառային ծառայությունից ազատելը (հոդ. 16): Ի դեպ, այս 16-րդ հոդվածը մտածված է տեղադրված այս հոդվածաշարքի վերջում, որովհետև այն կամբջում է ժառանգական իրավունքին նվիրված հիշյալ 15 հոդվածները դատաստանագրքի 17—38-րդ հոդվածների հետ, որոնք կարգավորում են ծառայի և աղախնի իրավական դրույթյան խնդիրները:

Մեղ թվում է, որ միանգամայն անհաջող ձևով են համակարգված նշված 16 հոդվածները ասորերեն դատաստանագրքում: Նրանք հաջորդաբար արտահայտված են դատաստանագրքի 1, 2, 5, 6, 7, 8, 9, 12, 19, 22, 24, 27, 35, 37, 38-րդ և 3-րդ հոդվածներում: Ասորերեն դատաստանագիրը կազմողները տեղաշարժելով հայերեն դատաստանագրքի 1—38-րդ հոդվածների տրամաբանված համակարգը, իրենց դատաստանագրքում խախտել են հոդվածների համախմբվածությունը՝ ըստ կարգավորման առարկայի կամ պարզապես՝ համակարգումը: Այսպես, հայկական տարբերակի 16-րդ հոդվածը ասորական տարբերակի 4-րդ հոդվածի տակ դնելով, նրանք ոչնչացրել են այն կամուրջը, որով միմյանց հետ կապվում էին երկու կարևորագույն՝ ժառանգման և ծառայի ու աղախնի իրավական դրույթները կարգավորող ինստիտուտները: Արդարացված չէ նաև հայկականի 15-րդ հոդվածի տեղաշարժումը ասորական տարբերակի 3-րդ հոդվածի տակ: Այդ հոդվածը հայկական տարբերակում տեղադրված է ժառանգական իրավունքի հոդվածաշարքի վերջում, քանզի այն կարգավորում է հոր իշխանությունից դուրս եկած որդուն ժառանգման իրավունքներից զրկելու խնդիրը:

¹³ 36 և 57-րդ հոդվածները տե՛ս ձեռ. № 488-ում:

Ասորական տարրերակի 13, 14, 15, 16, 17, 18, 20, 25, 29-րդ հոգվածները կարգավորում են ամուսինների զույգային իրավունքները համատեղ կյանքի ընթացքում, պոռոզի նկատմամբ և այլն, որոնք ոչ մի կերպ չեն կապվում ժառանգման և ծառայի իրավական դրույթները կարգավորող ինստիտուտների հետ: Վերցվելով հայկական տարրերակի 63—66-րդ և 68—73-րդ հոգվածաշարքից, նրանք տեղափոխված են խորթ միջավայր:

Ասորական տարրերակի 1—38 հոգվածաշարքում խախտված է նաև իրավանորմերի ներքին կապը ըստ կարգավորման առարկայի: Այսպես, ժառանգական իրավունքին նվիրված հոգվածների հարևանությամբ մենք տեսնում ենք ծառայի իրավական դրույթները սահմանող նորմեր: Մինչդեռ հայկական տարրերակի 1—38-րդ հոգվածների համակարգում այդ բանը չի նկատվում: Այստեղ 1—16-րդ հոգվածները նվիրված են ժառանգական իրավունքին, իսկ 17—38-րդ հոգվածները՝ ծառայի իրավական դրույթներ: Որպես օրինակ կարելի է բերել ասորական տարրերակի 19, 21*, 22, 23*, 24, 26*, 27-րդ հոգվածները, որոնցից առանց աստղանիշերի նորմերը կարգավորում են ժառանգական հարաբերությունները, իսկ աստղանիշերովը՝ ծառայի իրավական դրույթները:

Հայկական և ասորական տարրերակների համեմատական իրավագիտական ուսումնասիրությունից բխող ևս երկու կարևոր հանգամանքների վրա կկամենալինք հրավիրել ընթերցողի ուշադրությունը: Հայկականի 88-րդ հոգվածից լրջորեն խախտվում է հոգվածների խմբային համակարգը և դասավորությունը ըստ կարգավորման առարկայի: Նույնը նկատվում է կայուն համակարգ չունեցող ասորականում: Այդ շեղումը պարզորոշ երևում է 88—98-րդ հոգվածներում, որոնք աչքի չեն ընկնում կարգավորվող հարաբերությունների տրամաբանված հաջորդականությամբ, թեև պահպանում են համակարգվելու առանձին տարբեր: Սակայն սկսած 105-րդ հոգվածից նորից դրսևորվում է նորմերի համակարգման ձգտումը: Այսպես, հայկական տարրերակի 105—108, 115, 117—124-րդ հոգվածները նվիրված են բրևական իրավունքին:

Դատաստանադրքում նկատվող այս հետաքրքիր տեղատվությունն ու մակընթացությունը հատուկ ուսումնասիրության կարոտ երևույթ է: Մեղ թվում է, որ այդ փոփոխությունը ինչ-որ չափով կապված է Հուստինիանոս կայսեր և նրա հաջորդների վարած քաղաքականության հետ: Այդպես մտածելու տեղիք են տալիս հայերեն դատաստանադրքի 88 և 144-րդ հոգվածները:

Բանն այն է, որ դատաստանադրքի 88-րդ հոգվածը հակասում է որդիների և դուստրերի համար անհավասար ժառանգական իրավունքներ սահմանող 1-ին հոգվածին: 88-րդ հոգվածը վերացնում է այդ խտրականությունը: Սակայն, հավանաբար, ավելի ուշ ընդունված 144-րդ հոգվածն իր հերթին հակադրվում է 88-րդ հոգվածին և որդիներին շնորհում է առավել ժառանգական իրավունքներ: Դատաստանադրքի 88-րդ հոգվածում կարդում ենք. «Մարդ եթէ մեռանի առանց կտակադրի. ժառանգեն զնայրն զստերն հետ եղբարցն, և եթէ մայրն զկնի հարն մեռանի առանց կտակի և զնա զստերն հաւասար եղբարցն ժառանգեն. ապա թէ երբ հայրն կենդանի էր, պոռոզաւր եհան զնոսայ ի տանէն, բերեն զպոռոզսն առ եղբայրսն և զնեն ի մէջ. և լինի բաժանումն հաւասար ը վերայ նոցա: Իսկ թէ յետ հարն մահուն մայրն կենդանի է և մեռանին յորդւոց իւրոց և շառնէ կտակ, և չունի որդիք՝ ժառանգեն զնա քուերքն հետ

մարն¹⁴ և այլ եղբարցն, և մայրն լինի հաւասար ժառանգակից որդւոցն և ղստեւացն» (ընդգծումները մերն են—Ս. Հ.):

Այս հոդվածի ուժով կանայք (մայրը և դուստրը) ձեռք են բերում որդիների հետ հավասար ժառանգական իրավունքներ մերձավոր հարադատների՝ հոր, մորեղբոր, քրոջ ժառանգական ունեցվածքի նկատմամբ: Այն արմատական բեկում է կանխագծում կանանց ժառանգական իրավունքներում: Բայց դա տեղի է ունեցել մի այնպիսի պատմական շրջանում, երբ էական փոփոխություններ չեն արձանագրվում Հայաստանի սոցիալ-տնտեսական պայմաններում: Մնում է ենթադրել, որ նման օրենք կարող էր ընդունվել արտաքին զորեղ միջամտության ուժով: Պատմությունից մեզ հայտնի է հայերի ժառանգական իրավունքներին միջամտելու մի այդպիսի փորձ: Դա Հուստինիանոս կայսեր (527—565)՝ «Հայոց ժառանգական իրավունքի մասին» էդիկտն է և նույնի՝ «Հայոց ժառանգական իրավունքի մասին» 21-րդ նովելլան, որոնք ընդունվել են 535—536 թթ.:

Հուստինիանոսի հիշյալ էդիկտում գրված է. «Մենք ցանկանում ենք, որ... կանայք ևս իրավունք ունենան, այսպես կոչված, տոհմային կալվածքներից ժառանգություն ստանալու», իսկ 21-րդ նովելլայում կարդում ենք, որ «ծնողների, եղբայրների և մնացած ազգականներին ժառանգելու իրավունք ունենան ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք»: Ինչպես տեսնում ենք, հայերեն դատաստանագրքի 88-րդ հոդվածը հարադատորեն արտահայտել է Հուստինիանոսի հիշյալ էդիկտի և նովելլայի պահանջը: Բայց առավել հետաքրքիրն այն է, որ 88-րդ հոդվածը նույնությամբ արտահայտված է նաև ասորերեն դատաստանագրքի 102-րդ հոդվածում: Այս հանգամանքը ևս ենթադրել է տալիս, որ դատաստանագիրքն ունի հայկական ծագում և լրացուցիչ կուլան է ասորականի հիմքում հայկական տարբերակը փնտրելու համար:

Համընդհանուր կարգ է՝ երբ ընդունվում է նոր օրենք, հինը վերացվում է: Բայց հայերեն և ասորերեն դատաստանագրքերում այդ բանը տեղի չի ունեցել: Հին օրենքը՝ 1-ին հոդվածը, պահպանվել է և հայկական ու ասորական տարբերակների 88-րդ և 102-րդ հոդվածների տակ կյանքի է կոչվել նոր օրենքը՝ Հուստինիանոսի 21-րդ նովելլան:

Բյուզանդական Հայաստանի հայ ավագանին բացահայտ թշնամությամբ ընդունեց հայ կանանց ժառանգական իրավունքներն ընդարձակելու մասին Հուստինիանոսի այդ նովելլան: Դա հաստատվում է Պրոկոպիոս Կեսարացու վկայությամբ և դատաստանագրքի 144-րդ հոդվածով: Այսպես, Պրոկոպիոսը նկատում է, որ Հուստինիանոսի քաղաքականությունից դժգոհ հայ մեծամեծները, հանդիպում ունենալով պարսից խոսրով արքայի հետ, բողոքել են, որ Հուստինիանոսը «...մարդկային ամեն ինչ խառնել է ու տակնուվրա արել»¹⁵, որ նա «ի բնե նորամուծությունների սիրահար է, իրեն չվերաբերող հարցերի շուրջը վեճեր սարքող»: Խոսելով Հուստինիանոսի խոշորագույն իրավագետ Տրիբունիանոսի «սարսափելի դրամասիրության» մասին, Պրոկոպիոսը նշում է, որ նա «միշտ պատրաստ [էր] շահույթի համար ոտնակոխ անել արդարությունը. նա ամեն օր օրենքներ էր չեղյալ հայտարարում և [նորերը] հրապարակում, և՛ մեկ, և՛ մյուս դեպքում դրամ կորզելով նրանցից, ովքեր այդ բանի

¹⁴ № 556 ձեռագրում, ի տարբերություն մյուս ձեռագրերի, սխալմամբ գրված է «հարն»:

¹⁵ «Բյուզանդական աղբյուրներ, Ա, Պրոկոպիոս Կեսարացի», թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրութ. Հրաչ Բարթիկյանի, Ե., 1967, էջ 83:

կարիքն ունենին»¹⁶։ Այսպիսի պայմաններում անհավանական չէ կարծել, որ հայ նախարարները խորապես զժգոհ են եղել նաև կանանց ժառանգական իրավունքները «տակնուլրա անելու» համար։ Այդ զժգոհության հետևանքն է հայերեն դատաստանագրքի 144-րդ հոդվածը, որը մեր խոր համոզմամբ դատաստանագրքում տեղ է գտել Հուստինիանոս կայսեր մահվանից հետո, քանզի այն հակասում է դատաստանագրքի 88-րդ հոդվածին կամ Հուստինիանոսի 21-րդ նովելլայի պահանջներին։ Ուսանելի է այն փաստը, որ 144-րդ հոդվածը դուրս հայկական է, այն բացակայում է Ասորական դատաստանագրքի լոնդոնյան և փարիզյան ձեռագրերում, ինչպես և արաբական տարբերակում։ Հայերեն դատաստանագրքի 144-րդ հոդվածում սահմանված է. «Թէ մեռանի մարդ առանց կտակի և թողու ժառանկորդս՝ որդիս կամ դստերս, և հանդիպի միում ի նոցանէ մեռանել, ժառանկեն զնայ իւր եղբարքն, և թէ մայրն կենդանի է հաւասարի ի բաժինսն»։

Հատկանշական է, որ թեև 88-րդ հոդվածը աղերսվում է Հուստինիանոս կայսրի օրենսդրական գործունեության հետ, բայց նրանում չի հիշատակված վերջինիս անունը, ինչպես այդ արված է բյուզանդական երեք կայսրերի՝ Կոստանդինիանոս Մեծի (306—337), Թեոդոս II-ի (408—450) և Լևոն I-ի (457—474) անշուքյամբ։ Մեղ թվում է, որ դա բացատրվում է Հուստինիանոսի գործունեության նկատմամբ Բյուզանդական Հայաստանում տիրող բացահայտ զժգոհությամբ։

88 և 144-րդ հոդվածներից բխում է նաև, որ Հայոց դատաստանագիրքը Հուստինիանոսի և հաջորդ կայսրերի օրոք կրել է փոփոխություններ։ V և հաջորդ դարերում նրա հոդվածներն ավելացել են ոչ միայն ի հաշիվ առանձին բյուզանդական, այլև զլիալորապես Արշակունյաց Հայաստանում գործող հայկական օրենքների։ Ուշագրավ է այն փաստը, որ հայկական տարբերակի 143—152-րդ հոդվածները (բացառությամբ 150-րդ հոդվածի) բացակայում են Լոնդոնի հնագույն ասորական ձեռագրում։

Ինչպես նկատել են Ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը, Խ. Սամվելյանը և այլք, Հուստինիանոսի էդիկտն ու նովելլան հետապնդել են ոչ թե հայ կանանց զուգրային իրավունքները ընդարձակելու նպատակը, այլ բյուզանդական Հայաստանի համար բախտորոշ նշանակություն ունեցող քաղաքական դիտավորություններ։ Առաջինը այն էր, որ Հուստինիանոսը ոտնձգում էր երկրի անկախության համար մարտնչող զլխավոր ուժի՝ նախարարության տնտեսական հիմքերի՝ տոհմային կալվածատիրության դեմ։ Հետադոտոգների տեսադաշտից վրիժալակ երկրորդ նպատակն այն էր, որ նա ձգտում էր վերացնել հյատակ հայերի՝ հայկական օրենքներով ղեկավարվելու ավանդույթը։ Դա երևում է 21-րդ նովելլայի՝ «Հայաստանում գործող օրենքները ոչնչով չտարբերվեն ռոմեացիների (օրենքներից)», «Բյուրի վրա համասարապես տարածվեն մեծ օրենքներ», «Հայոց աշխարհում գործեն լավ օրենքներ» (ընդգծումները մերն են—Ս. Հ.) արտահայտություններից, որոնք նշանակում են, թե հայերը ներքին կյանքում, այդ թվում՝ ժառանգական հարաբերություններում, ղեկավարվել են ոչ թե բյուզանդական, այլ հայկական օրենքներով։ (Տե՛ս «Պրոկոպիոս Կեսարացի», էջ 300—302)։

¹⁶ Նույն տեղում, էջ 79 և 67։

Համեմատելով քննարկվող դատաստանագրքի իրավանորմերը վաղ ավատական Հայաստանի կանոնական իրավունքի նորմերի հետ, դրանց միջև մենք նշմարում ենք շփման որոշակի եղրեր։ Դժբախտաբար, կանոնական իրավունքը սահմանափակ հնարավորություններ է ընձեռում համեմատություններ անցկացնելու համար, քանզի նրա կարգավորման ոլորտը էապես տարբերվում է աշխարհիկ օրենսդրության իրավասության սահմաններից։ Կանոնական իրավունքի իրավասությունից դուրս են եղել աշխարհականների՝ ժառանգական, սեփականատիրական, պարտավորական, ծառաների և աղախինների իրավական դրության, հանցագործության և ներգործության քրեա-իրավական միջոցների կարգավորման խնդիրները և այլն։

Թեև սույն դատաստանագրքի և կանոնական իրավունքի միջև համեմատություններ անցկացնելու մեր հնարավորությունները սահմանափակվում են ամուսնա-ընտանեկան իրավունքի ոլորտով, անգամ այդ սուղ պայմաններում դրսևորվում է այդ հուշարձանների նյութական նորմերի հարադատություն։ Այսպես, Բարսեղ Կեսարացու կանոնախմբի 21 և 23 կանոնների համաձայն¹⁷ աղախինների և ծառաների ամուսնությունը հաստատուն է ճանաչվում, երբ դա կատարվում է տիրոջ թույլտվությամբ, հակառակ պարագայում նրանց ամուսնությունը դիտվում է պոռնկություն։ Նույն սկզբունքը կիրառված է մեր դատաստանագրքի 75-րդ հոդվածում, թեև այն նվիրված է ծառայի և աղատ կնոջ ամուսնության խնդրին։ Այսպես, եթե աղատ կինը երեք անգամ ղգուշացվելուց հետո չի հրաժարվում ծառայի կինը լինելուց, ծառայի տերն իրավունք ունի աղատ կնոջն աղախնության մեջ քաշելու։

Հայկական կանոնական իրավունքի կնիքը դրոշմած ենք տեսնում մեր դատաստանագրքի՝ նշանին ամուսնության ձևին, մերձամուսնությանը, ամուսինների գույքային իրավունքներին և ամուսնալուծությանը վերաբերող իրավանորմերում։ Այդ դրոշմը առանձնապես ցայտուն է ամուսնության ձևի խնդրում։ Հայտնի է, որ բյուզանդական պետությունը եկեղեցական պսակը ամուսնության պարտադիր ձև ճանաչեց IX դարի վերջերին միայն, երբ Լեոն կայսրը պետական օրենքով (893 թ.) սահմանեց, որ միայն եկեղեցական պսակով կատարված ամուսնությունն է ճանաչվում ամուսնության միակ օրինական ձևը¹⁸։ Այլ էր վիճակը Հայաստանում։ Գրիգոր Լուսավորչի կանոններից զգացվում է, որ արդեն IV դարում պսակի խորհուրդը կատարվում էր եկեղեցում, իսկ Սահակի կանոնները (ԻԷ և ԻԸ) քահանաներից պահանջում էին պսակն օրհնելիս ապահովել ամուսնացողների փոխադարձ համաձայնությունը և ամուսնական տարիքը։ Ավանդության համաձայն, արդեն V դարում, Հայաստանում հայտնի է եղել «Մաշտոց» անունով ծիսարանը, որով իրականացվում էին եկեղեցական պսակի ծեսերը։ Այս ամենը վկայում է, որ Հայաստանում, համենայն դեպս՝ V դարի կեսերից ոչ ուշ, այսինքն՝ Բյուզանդիայից 450 տարի առաջ, եկեղեցական պսակը ճանաչվել է ամուսնության պարտադիր ձև։

Արդ, ինչպե՞ս է լուծվել նույն խնդիրը հայկական տարբերակում։ Այստեղ թեև գոյություն չունի եկեղեցական պսակը ամուսնության պարտադիր ձև ճանաչելու մասին հատուկ իրավանորմ, բայց այլ հարաբերություններ կարգավորող նորմերից երևում է պսակի օրհնության գոյությունը։ Այսպես, 45-րդ հոդ

¹⁷ «Կանոնագիրք Հայոց», Ա, աշխատասիր. Վաղգեն Հակոբյանի, Ե., 1964, էջ 348—349։

¹⁸ Н. С. Суворова, О гражданском браке, Ярославль, 1887, էջ 17—18։

վածում նշված է. «Արդ սահմանեաց նամաւս թաղաւորն լեւոն, զի թէ յետ արհնութեան պսակին և միաւորութեան առն և կնոջն, արձակե այրն առանց պատճառի...»: Նույնը նկատելի է նաև 51 և 56-րդ հոդվածներում: Ուշագրավ է այն փաստը, որ լոնդոնյան ձեռագրի 92-րդ հոդվածը պսակի եկեղեցական օրհնության մասին ոչ մի խոսք չի պարունակում և, ի տարբերություն հայկական տարբերակի 45-րդ հոդվածի, սկսվում է «Արձակէ այրն զկին իւր...» բառերով: Այդ հոդվածներից երեւում է, որ ի տարբերություն ասորականից, հայկական տարբերակում իրավական կարևորություն է տրվել պսակի օրհնությանը և կողմերի միությունը ճանաչվել է ամուսնական՝ այդ պահից սկսած, նրանից իսող իրավական հետևանքներով հանդերձ:

Դատաստանագրքի 56-րդ հոդվածի առանձին տարբերը հիշեցնում են հայոց եկեղեցու ծիսարան «Մաշտոցի» նշանն օրհնելու կանոնը և «Սասնա ծռեր» ժողովրդական օրհնության համունությունը: Այստեղ ասված է. «Աղջիկ, որ հանդերձի յամուսնութիւն, և ի ձեռն տալն տաճ կնոջն խաչ կամ մատանի կամ ալլ ինչ, և շժամանէ խաւսեալ այրն ի պսակ և մեռանի: Թէ ընդանիք առնն խնդրեն զայս ի կնոջն կամ յազգականացն. հրամայէ աւրլնքս, զի տեսաւ զկինն կամ համբուրեաց, առնու զկէսն յիրացն և զկէսն դարձուցանէ...» (ընդգծումը մերն է— Ս. Հ.): Երևանի Մատենադարանի ձեռագիր «Մաշտոցներից» մեկում, որից, մեր կարծիքով, V դարի հնություն է բուրում, նշան օրհնելու կանոնում կարդում ենք. «...Եւ դիցեն ի վերայ սկտեղ առաջի փեսային, մատանի, և ապաւանջան, և զինդ: Եւ առնու քահանայն զօրհնութեան զինին ի ձեռն: Եւ մեկնեացէ զխորհուրդ նշանին ունէլ ի ձեռն, և զխաչն զայն, զոր օրինակ է քրիստոնէից խաչփոխ առնէլ»¹⁹ (ընդգծումը մերն

19 Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. N° 953, լք 189: Մաշտոցի անվան մատենադարանի «Մաշտոցի» տասնյակ հնագույն ձեռագրերի ուսումնասիրությունը բերում է այն կարծիքին, որ այն «Կանոնագիրք հայոցի» նման ունեցել է իր խմբագրությունները և դարերի ընթացքում կրել է նկատելի փոփոխություններ: Թեև Երևանի Մատենադարանի N° 953 ձեռագիրը ընդօրինակված է 1656 թ., բայց տվյալներ կան ենթադրելու, որ այն ոչ միայն արտագրված է IX դարի ձեռագրից, այլև, հավանաբար, հարազատ է եղել V դարի մաշտոցյան խմբագրության: N° 953 ձեռագրում կա Մաշտոց Եղվարդեցու (սա 891—892 թթ. եղել է Սեանի առաջատի առաջնորդ, ավելի ուշ՝ կաթողիկոս Հայոց՝ Մաշտոց Ա անունով) աշակերտ Ստեփանոս Կրոնավորի՝ 893 թ. Սեանի անապատում ընդօրինակված Մաշտոցի հիշատակարանը, որը միևնույն ժամանակ Եղվարդեցո՞ւ վարքն է: Այս հանգամանքը մտածել է տալիս, որ N° 953 ձեռագիրը ընդօրինակվել է IX դարում գոյություն ունեցած մեկ այլ ձեռագրից: Վերջինիս նշան օրհնելու կանոնը էապես տարբերվում է X—XIV դարերում ընդօրինակված «Մաշտոցների» տասնյակ ձեռագրերից: Այս ձեռագրի «նշան օրհնելոյ» սահմանումները դուռ կանոնա-իրավական են և նրանց իսկական տեղը «Կանոնագիրք Հայոցն» է: Հավանաբար այդ հանգամանքը նկատի ունենալով, X և հաջորդ դարերի ընդօրինակողները բաց են թողել ստորև բերվող բաղվածքը, քանզի այն չի կապվում նշանն օրհնելու արարողության հետ: Ինքնին ենք N° 953 ձեռագրի այդ հատվածը. «Կանոնն նշան օրհնելոյ. Պարտ է քահանային նախ ընտրել կանոնօրդինսայն և զհարսն, զի մի լիցին ազգակից հողևոր կամ մարմնաւոր և մի աննման միմեանց: Որպէս կոչս այրոյ կամ ընդ պոռնկի: Այլ լիցի փեսայն ԺԴ ամաց և հարսն ԺԱ ամաց: Եւ նստուցանեն ի վերայ աթոռոյ ընդդեմ միմեանց և ոչ ի ծածուկ հեթանոսաբար: Եւ դիցեն ի վերայ սկտեղ առաջի փեսային, մատանի, և ապարանջան, և զինդ: Եւ առնու քահանայն զօրհնութեան զինին ի ձեռն: Եւ մեկնեացէ զխորհուրդ նշանին ունել ի ձեռն, և զխաչն զայն, զոր օրինակ է քրիստոնէից խաչփոխ առնէլ»: Այսպես չի սկսվում 1831 թ. Վենետիկում տպագրված «Մաշտոցի» «բաղդատութեամբ բաղմաթիւ և նադիր օրինակաց իրոյ յիսնոյ նաև հասպոյն ևրկաթագիր ձեռագրի» նշան օրհնելու կանոնը: Այստեղ այն սկսվում է «Դենն ի վերայ սկտեղ

Լ—Ս. Հ.): «Սասնա ծռերի» բազմապատումների Դավթի ճյուղում խանդութի հետ ամուսնանալու ցանկությունը Դավթի ղրսևորել է համբույրի ձևով խանդութի այլ ուղնկանների ներկայությամբ: Հիշյալ աղբյուրների հաղորդումները շատ նման են միմյանց:

Դատաստանագրքի 53, 54 և 55-րդ հոդվածները սերտորեն աղերսվում են Շահասյիվանի ժողովի կանոնական սահմանումների հետ: Նրանք արգելում են ամուսնությունը եղբոր կնոջ կամ այրիացած հարսի, կնոջ քրոջ (քենու), եղբոր դստեր, մորաքրոջ, հորաքրոջ, խորթ մոր, հոր աղախնու հետ: Այլ կերպ ասած՝ դատաստանագիրքն արգելում էր կողային գծով ազգականների ամուսնությունը մինչև երրորդ աստիճանը ներառյալ: Նույնը սահմանում են նաև Շահասյիվանի ժողովի 12 և 13-րդ կանոնները: Հատկանշական է, որ բյուզանդական կայսր Թեոդոս Մեծի 385 թ. օրենքով արգելվեց 4-րդ աստիճանի ամուսնությունը, իսկ ավելի ուշ՝ 692 թ. Տրուլլյան ժողովում կանոն ընդունվեց կողային գծով 4-րդ աստիճանի ամուսնությունն արգելելու մասին: Հայտնի է նաև, որ Հայաստանում մերձամուսնական արգելքը մեկ աստիճանով ավելացվում է (այսինքն՝ ներառյալ 4-րդ աստիճանը) Պարտավի ժողովի 16-րդ կանոնով (768 թ.): Այս առնչությամբ, թվում է, անհավանական չի լինի կարծել, որ եթե մեր այս դատաստանագիրքը լիներ ուշ շրջանի հուշարձան, ապա նրանում անպայմանորեն կարտահայտվեին այս կարգի փոփոխություններ՝ կանոնական սահմանումներին չհակասելու համար: Սակայն մերձամուսնությունն արգելելու առնչությամբ առավել հետաքրքիր է մեկ այլ կարևոր հանգամանք՝ դատաստանագրքում չկան խնամիական և հոգևոր ազգակցության կապակցությամբ ամուսնությունն արգելող իրավանքներ: Սա նշանավոր փաստ է: Բանն այն է, որ կանոնական օրենսդրությունը խնամիական ազգակցության կապակցությամբ ամուսնությունն արգելելու խնդիրը սկսել է կարգավորել միայն IV դարի 2-րդ կեսից սկսած: Այսպես, «Կանոնք Բարսղի առ Ամփիլոքոս» կանոնախմբի 51-րդ կանոնը արգելում է ամուսնանալ կնոջ քրոջ, կնոջ մոր հետ: Նույն Բարսղիին վերագրված «վասն պէսպէս եւ բիւրապատիկ ախտից» կանոնախմբի 132, 147 և 272-րդ կանոններով արգելվում էր երկու եղբոր և երկու քրոջ, երկու քույրերի հետ, ինչպես նաև կնոջ եղբոր և ամուսնու քրոջ ամուսնությունը: Այլավկա որդու կանոնները (կանոն Ծ) արգելում էին զոքանչի հետ ամուսնանալը, իսկ Գոշի դատաստանագրքի 109-րդ հոդվածի համաձայն «յամենայն խնամութիւնսն այնոքիկ լիցին, զի ի լինելն մնայ երեքն եւ կամ չորսն, բայց հինգերորդն լիցի քահանայից եւ չորրորդն աշխարհականաց ամենեցուն»: Հոգևոր ազգակցության կապակցությամբ ամուսնության արգելումը նույնպես քրիստոնեական կրոնի հալթանակի հետևանքն էր: Մեզ հայտնի է, որ Հուստինիանոսի օրենքներով արգելվեց սանիկի և կնքահոր ամուսնությունը: Այնուհետև արգելվեց կնքահոր և սանամոր, կնքահոր որդու և սանիկի ամուսնությունը... իսկ 1107 թ. բյուզանդական Նիկողայոս պատրիարքի ժամանակ արգելվեց կնքահայրական պսակը մինչև յոթ աստիճան: Խնամիական և կնքահայրական ազգակցության կապակցությամբ ամուսնությունն արգելող նորմերի բացակայությունը ցույց է տալիս, որ դատաստանագրքով ար-

դնշանն, եւ սարկաւազն ասէ՝ արտահայտությամբ, իսկ ապա՝ մի փոքր աղոթք, շարականի ընթերցումն և այլն: Վերոհիշյալ քաղվածքը հայ իրավունքի պատմության համար կարևոր է նաև վաղ ֆեոդալական Հայաստանում ամուսնական տարիքի առեղծվածը լուծելու համար:

սկսված չէր այդպիսի ամուսնությունը: Այդ նշանակում է, որ ի դեմս դատաստանագրքի մենք դործ ունենք մի հուշարձանի հետ, որի առանձին նորմերը, ըստ երևույթին, ընդունվել են V դարից առաջ: Միակ արգելքը, որ դատաստանագրքով սահմանված էր խնամհական ազդակցության գծով, գա քենու հետ ամուսնության արգելումն էր (հոդ. 53):

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում հայկական տարբերակի 73-րդ հոդվածը (տե՛ս լոնդոնյան ձեռ. 36-րդ հոդ.): Այնտեղ ասված է. «Թէ լինի առն Բ կին. և առաջինն էր առանց պոռոզաց, որ և ծնաւ նմին որդիք, և լառ կին մի ալլ արինաւ ծնան և ի նմանէ որդիք, հաւասար ժառանկեն որդիքն թէ ոչ...» (ընդգծումը մերն է—Ս. Հ.): Այս հոդվածից պարզորոշ երևում է, որ տղամարդը երկու կին ունենալու իրավունք է ունեցել. բայց ե՛րբ: Եղիշեի պատմության մեջ նշված «մեկ կնոջ փոխարեն թող շատ կանայք առնեն»²⁰ հայերին ուղղված պարսիկների այս առաջարկը ցույց է տալիս, որ V դարի կեսերին Հայաստանում հաղթանակել էր միակնության գաղափարը և վերոհիշյալ իրավանորմը V և հաջորդ դարերում ընդունվել չէր կարող: Այլ էր վիճակը Հայաստանում IV և գուցե III դարերում: Բուդանդի և Խորենացու հավաստի պատմական վկայություններից մեզ հայտնի է, որ Հայոց Արշակ II արքան երկկին էր: Նա ամուսնացած էր Բյուզանդիոնից բերված կայսերացեղ Ողոմպիի (ըստ Խորենացու՝ Ոլիմպիադայի) և Սյունյաց աշխարհի նահապետ Անդոկի դստեր՝ Փառանձեմի հետ: Երբ վերջինս թունավորում է «Ոլիմպիադային՝ Արշակի առաջին կնոջը... նախանձելով նրա տիկնության վրա»²¹, որոշ ժամանակ անց Արշակը նորից դառնալու էր երկկին, եթե նրան չգտվեր Անդոկ իշխանը: Բուդանդն ասում է. «...երբ Անդոկը... իմացավ, թե Պարսից Շապուհը ուզում է իր աղջիկը կնության տալ Հայոց թագավորին... հասկացավ, որ եթե Արշակը կին առնի պարսից թագավորի դստերը, ապա իր դուստրը անարգություն կկրի, որովհետև այդ Փառանձեմը... Հայոց Արշակ թագավորի կինն էր»²²: Հետաքրքիր է նշել, որ ո՛չ պատմիչներ Բուդանդը և Խորենացին, ո՛չ Արշակի ժամանակակից հայոց բահանալուպետ Ներսեսը Արշակին չեն պարսավում երկկնության համար, մինչդեռ Արշակի վարքը ըստ ամենայնի քննադատված է մերձամուսնության, մասնավորապես՝ եղբոր որդու կնոջ (Փառանձեմի) հետ ամուսնանալու, կոծի և այլ հեթանոսական պատկերացումների ու վարքի համար: IV և V դարերի պատկերացումների միջև նկատվող այս բացահայտ հակասությունը բացատրվում է նրանով, որ IV դարի օրենքներով երկկնությունը թույլատրելի է եղել Հայաստանում և այդ բանի ապացույց է մեր դատաստանագրքի 73-րդ հոդվածը, որը կարծես թե վկայում է այդպիսի օրենքի գոյության փաստը, և հուշում է մեզ այն մասին, որ դատաստանագիրքը պարունակում է հայ Արշակունիների դարաշրջանին հարապատ իրավանորմեր:

Հայ կանոնական իրավունքը սովորաբար չի կարգավորում ամուսինների գույքային իրավունքները այն իր իրավասությունից դուրս համարելու պատճառով: Բացառություն է կազմում Շահապիվանի ժողովի կանոնախումբը, որը հնարավորություն է ընձեռում համեմատելու դատաստանագրքի նույն հարարերությունները կարգավորող իրավանորմերի հետ: Այսպես, Շահապիվանի

20 Եղիշե, Վարդանանց պատմությունը, Ե., 1958, էջ 51:

21 Մ. Խորենացի, Հայոց պատմություն..., Ե., 1961, էջ 288:

22 Փ. Բուդանդ, Հայոց պատմություն..., Ե., 1947, էջ 190:

կանոններից և այլ աղբյուրներից մեղ հայտնի է, որ տղամարդիկ ամուսնանալիս աղջկան տալիս էին վարձանք, իսկ աղջիկների ամուսնությունը լինում էր օթտաբեր կամ պոռոյգով: Այդ հարաբերություններն ամենայն մանրամասնությամբ կարգավորված են դատաստանագրքում: Այստեղ հավասարապես օղտագործված են «վարձանք» տերմինը և նրա ասորերեն հոմանիշ տուարը, իսկ օթիտի փոխարեն՝ հունական «պոռոյգ»-ը: Շահապիվանի 5-րդ կանոնի համաձայն, եթե ամուսինը բաժանվում է իր կնոջից ամուսնության պատճառով, ապա «որ ինչ կնոջն կարասի բերեալ է ի տուն, թէ աղախին, թէ անասուն, եթէ հանդերձ, եթէ արծաթ՝ առնուլ իշխեսցէ եւ գնալ»: Այլ կերպ ասած, կինը իր օթիտի սեփականատերն է և ամուսնալուծության ժամանակ չի զրկվում այդ իրավունքից, եթե այն տեղի է ունեցել ոչ կնոջ մեղքով: Նույն սկզբունքն արտահայտված է նաև մեր դատաստանագրքի 85-րդ հոդվածում:

Հայտնի է, որ հասարակական հարաբերությունների օրենսդրական կարգավորումը աշխարհիկ և հոգևոր մարմինների իրավասությունների բաժանելը կատարվել է IV—V դարերի ընթացքում: Այդ առթիվ վկայություններ են պահպանված Ագաթանգեղոսի, Բուղանդի և Խորենացու մոտ: Հոգևոր հայրերը և մեր աղգային եկեղեցական ժողովները սկսել են կանոնական նորմեր ընդունել IV դարից սկսած: Բուղանդի հաղորդման համաձայն հայ հոգևոր ղեկավարներից առաջինը Ներսես Պարթևն էր, որ փորձեց ապահարդանը և մերձամուսնություններ հայկական կանոնական օրենսդրությամբ կարգավորել և նրա փորձը, ինչպես հայտնի է, հաջողությամբ չպսակվեց, որովհետև Պապ թագավորը ոչ միայն վերացրեց Ներսեսի սահմանած կարգերը, այլև, հավանաբար, վերականգնեց այդ հարաբերությունները կարգավորող նախկին՝ Արշակ II-ի թագավորության սկզբում գործող օրենքները: Համենայն դեպս, Բուղանդը չի ասում, թե Պապը նրանց առթիվ նոր օրենքներ ընդունեց: Շահապիվանի կանոններից պարզորոշ երևում է, որ V դարի կեսերին ամուսնալուծության և մերձամուսնության խնդիրը Հայաստանում կարգավորվել է կանոնական օրենսդրությամբ: Եթե մեր դատաստանագիրքը ընդունված և գործողության մեջ դրված լիներ, Շահապիվանի ժողովից հետո, ապա այն չպետք է պարունակեր հոգևոր իշխանության կամ կանոնական օրենսդրության իրավասությանը հանձնված ապահարդանի և մերձամուսնության խնդիրը կարգավորող իրավանորմեր: Մինչդեռ այդ դատաստանագիրքը ոչ միայն պարունակում է այդ հարաբերությունները կարգավորող մի շարք նորմեր (տե՛ս հոդ. հոդ. 45, 46*, 53, 54, 55, 65, 81, 82, 83*, 84*, 86*, 87*), այլև ոչ պակաս հետաքրքիր է նաև այն, որ «Ասորական դատաստանագիրքը» չի պարունակում աստղանիշերով նշված հոդվածները: Դրանք համարյա ամբողջովին վերաբերում են ապահարդանի իրավունքին: Նրանցից հատկապես նշելի են 45-րդ և 86-րդ հոդվածները, որոնցից առաջինը մեղ հարադատ է թվում մինչև IV դարը եղած ամուսնալուծության կարգերին, իսկ 86-րդ հոդվածը հակադիր է 45-րդ հոդվածին և միանգամայն հարադատ է հաղթանակած քրիստոնեության շրջանին: Այսպես, եթե 45-րդ հոդվածի համաձայն ամուսինը կարող է արձակել «զկին իւր առանց պատճառի», ապա ըստ 86-րդ հոդվածի ամուսինը առանց օրինավոր պատճառի չի կարող արձակել «զկինն իւր և զրկել ի պոռոյգացն»:

Հնագույն ժողովուրդների իրավահայտ աղբյուրներից (բաբելացիների, խեթերի և այլն), ինչպես նաև Բուղանդի պատմությունից մեղ հայտնի է, որ օրենքները ապահարդանի խնդրում միանգամայն մեծ և անհավասար իրա-

վունքներ էին սահմանում տղամարդու համար՝ կնոջ հանդեպ: Տղամարդը կարող էր կամայաբար կնոջը դուրս անել իր տնից և նոր կին բերել: Հայոց Արշակ—Պապ թագավորների և Ներսեսի գործունեության շրջանը ցույց է տալիս, որ Հայոց եկեղեցին IV դարում մեծ ջանքեր էր գործադրում տղամարդու այդ իրավունքը սահմանափակելու ուղղությամբ: Բուզանդն ասում է, որ Ներսես հայրապետի օրերում, նրա «ահից ոչ ոք չէր համարձակվում մեկի կինը խլել և թողնել իր կին ամուսինը»: Բայց նույն Բուզանդը Պապ թագավորի գործունեության առնչությամբ նշում է, որ Ներսեսի մահից հետո «ամեն մարդ թագավորից հրաման ստացավ՝ համարձակորեն թողնել իրենց ամուսին կանանց. կարմարդ, որ տասը կին էր փոխում»: Ակնհայտ է, որ Պապը իր հրամանով վերահաստատեց Հայաստանի հիթանոսական շրջանին հարազատ տղամարդու վաղեմի իրավունքը ամուսնալուծության ազատության խնդրում: Այս հանգամանքը հաստատվում է նաև Աղվենի ժողովի ԺԱ կանոնով, որի «եւ որ զկին թողու առանց պատճառանաց» արտահայտությունը ցույց է տալիս, որ տղամարդիկ առանց պատճառի թողնում էին կանանց: Ընթերցողը չի կարող չտեսնել, թե որքան հարազատ են Հայաստանում իշխող իրավական կարգերը մեր դատաստանագրքի 45-րդ հոդվածում սահմանված «առանց պատճառի» ամուսնալուծության իրավունքին: Դա մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ ի դեմս 45-րդ հոդվածի մենք գործ ունենք Հայաստանի IV դարին հարազատ իրավական նորմի հետ, իսկ ի դեմս 86-րդ հոդվածի՝ ավելի ուշ, հավանաբար՝ V դարի կեսերից հետո ընդունված իրավանորմի հետ, քանի որ վերջինս հակասում է 45-րդ հոդվածի պահանջներին: Այստեղ նույնպես արտահայտված է այն սկզբունքը, ինչ մենք նշեցինք Հուստինիանոսի 21-րդ նույնլայի կապակցությամբ, այսինքն՝ առանց հին օրենքը (հոդ. 45) վերացնելու կյանքի է կոչվել նոր օրենքը (հոդ. 86): Հետաքրքիրն այն է, որ վերջինս տեղ չի գտել հնագույն լոնդոնյան ձեռագրում, այլ կերպ ասած, պետք է ենթադրել, որ այն ունի հայկական ծագում և պատկանելություն:

Ուշագրավ է դատաստանագրքի՝ ապահարզանի հիմքերի համեմատությունը հայ կանոնական իրավունքով օրինականացված հիմքերի հետ: Դատաստանագրքի 86-րդ հոդվածը սահմանում է. «է՞ կարելի առն արձակել զկին իւր և զրկել ի պոռյգացն, յորժամ ոչ ունի արինաւոր պատճառ ի վերա նորա. ոչ կարէ առնել զայս, բայց թէ առինաւոր պատճառս ցուցանէ, որ են այս. թէ շնադաւ կինն ընդ ատար այր, կամ աթեցաւ ի տուն, որ ոչ է իւրոց, առանց առնն հրամանի, կամ թէ գնաց յանվայելուչ խաղս և այլ որ սոցին են նման, երբ ստոյգի յայսցանէ պատճառ ի վերայ կնոջն, արձակէ զկինն առանց պոռյգացն. ապա թէ այլ պատճառաւ կամի արձակել, և յայսպիսի շարեացս ոչ ի վերա ստոյգ է, ոչ կարէ առնուլ զպոռյգսն և ոչ բնաւ ունի հրաման պակասեցնել իրս»: Այս իրավանորմը միանգամայն հարազատ է հայ կանոնական իրավունքին, մասնավորապես՝ Սահապիվանի կանոններին:

Տիեզերական, տեղական և մեր ազգային ժողովներում և «սուրբ հայրերի» կողմից հաստատված կանոնները տղամարդուն իրավունք էին տալիս արձակել շնացող կամ առանց ամուսնու հրամանի օտարի տանը մնացած կնոջը: Ընդ հայտնի է նաև, որ հայ եկեղեցին V դարում կտրուկ միջոցներ է ձեռք առել՝ «անվայելուչ խաղս» և սրանց նմանները արգելելու ուղղությամբ: Հովհան Մանդակունու «Վասն անօրէն թատերաց յիւականաց» ճառում նշված է այդ բանի պատճառը. «Զի անդի յորդորին կուսանք ի պոռնկութիւնս, ամուսնաւորք

ի շնութիւնս. անդի լինին կանայք ատելի արանց, և արք կանանց արհամարհելի...»²³։ Նույնը սահմանում է մեր դատաստանագրքի 112-րդ հոդվածը։ Այն-սուղ ասված է. «Որդիք ընդ հաւր իւրեանց ոչ ունին իշխանութիւն մտանել ի թէստրոնն»։

Ուշադրութեան արժանի է մի կարևոր հանգամանք ևս. «Աւրէնք յաղթող թագաւորաց...»-ը չի կարգաւորում հոգևորականների աշխարհիկ (ժառանգական, զույքային, պարտավորական, ամուսնական և այլն) և հոգևոր հարաբերությունները։ Այն պարունակում է հոգևորականներին վերաբերող միայն երեք հոդված՝ 41, 42 և 43, որոնք վերաբերում են աշխարհականների և հոգևորականների հարակալին հարաբերություններին և նվեր տալու խնդրին։ Դա ցույց է տալիս, որ դատաստանագիրքն ունեցել է զուտ աշխարհիկ կոչում։ Հոգևորականների հարաբերությունները կարգաւորող հոդվածների բացակայութունը դատաստանագրքում մտածել է տալիս, որ վերջինիս իրավասութիւնից դուրս է եղել այդ հարաբերությունների կարգաւորումը, հաւանաբար այն պատճառով, որ դա մտնում էր կանոնական իրավունքի իրավասութեան մեջ։ Հայոց կանոնական իրավունքի ուսումնասիրութիւնից էլ բխում է, որ նա էլ չի կարգաւորել դատաստանագրքով նորմաւորված հարաբերությունները։ Մեր պատկերացմամբ, «Աւրէնք յաղթող թագաւորաց...»-ը և կանոնական իրավունքը, իսկ հետագայում «Կանոնագիրք Հայոցը» ոչ միայն չեն հակասում միմյանց, այլև լրացնում են իրար և հարազատ են միեւնոյն դարաշրջանին, կազմելով այս դարաշրջանը պատկերող մեկ միասնական ամբողջութիւն։

Անդրադառնալով հոդվածի սկզբում բարձրացված հարցերին. ո՞ր լեզվով է նախապես կազմվել այդ դատաստանագիրքը և ո՞ր լեզվից է այն փոխադրվել հայերենի։ Այս կարևոր հանգամանքը աներկբայորեն որոշելու համար, ինչպես սրդեն ասել ենք, անհրաժեշտ է կատարել լեզվատեմինաբանական մանրամասն ուսումնասիրություններ։ Մեր տպավորութիւնն այն է, որ դատաստանագրքի հայկական տարբերակը թարգմանվել է ոչ թե ասորերենից, այլ հունարենից։ Հայ թարգմանիչները, հաշիւի առնելով այն հանգամանքը, որ դատաստանագրքի որոշ հունարեն տեքստներ արմատաւորվել են կյանքում և հայացվել ժողովրդի կողմից, հայերեն դատաստանագրքում դրանց տվել են մեծ տեսակարար կշիռ։ Այսպես, մի շարք հոդվածներում նրանք նույնութեամբ պահպանել են այդ տեքստները, զուգահեռաբար նշելով դրանց հայերեն համարժեքը։ Այդ տեքստներն են՝ եպիտրոպ (հուն. ἐπίτροπος) — խնամակալ, հոգաբարձու, տիաթիկ (հուն. τῆλεθεῖς) — կտակ. նաւմաւո (հուն. νόμος) — օրենք, կանոն, կուրատոր (լատ. curator, հուն. —ից κηροποιός) — հոգաբարձու, պոռոտիմոն (հուն. ποροτιμόν) — գրավ դրված գումար, պոռոգ (հուն. ποροί) — հարսի օժիտ, հուդ (հուն. ἥδῃ) — ապրուստի փող, թոշակ, ոռհիկ և այլն²⁴։

Հիշյալ դատաստանագիրքը նախապես հունարեն լեզվով ստեղծելը նշանավոր է նաև նրանով, որ անուղղակիորեն աղերսվում է IV դարի հետ, երբ հայերը իրենց գրերը չունենալու պատճառով օգտագործում էին հունաց գրերը՝ թիվս այլ պատմիչների, լատար Փարպեցին նշում է, որ «ասորի և յոյն գրութիւն արեւելին յայնժամ զգործ թագաւորացն Հայոց՝ արքունի դպիրքն, զվճողն և

²³ «Տեառն Յովհաննու Մանդակունոյ Հայոց հայրապետի ճառք», ի Վենետիկ, 1836, էջ 125։

²⁴ Տե՛ս դատաստանագրքի 3, 8, 11—13, 16, 20, 31, 44—52, 69, 76, 80—82, 93—96, 100, 104, 127, 135, 139, 141—146-րդ և այլ հոդվածները։

պհրովարտակացն»։ Մասնավորեցնելով իր միտքը, Փարպեցին մեղ հնարավորություն է տալիս կողմնորոշվելու, թե կյանքի որ ասպարեզում հայերը որ լեզուն էին օգտագործում. «պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս»²⁵։ Այսպիսի պարագաներում արդյոք հավանական չի՞ լինի կարծել, որ դատական գործերը այն ժամանակներում արձանագրում և վճռում էին օգտվելով հունարեն գրերից։

Հարկ է նշել, որ դատաստանագրքում խիստ հազվագյուտ են ասորական իրավաբանական տերմինները։ Մեղ հաջողվել է նշմարել նրանցից միայն մեկը՝ տուար (ասոր. daoura) բառը, որը Հայաստանում նաև կոչվում էր վարձանքի կամ կնոջ վարձագին։ Ըստ Ստ. Մալխասյանցի, նույն իմաստով բառը գտնում ենք ֆրանսերենում douairel ձևով²⁶։ Զարմանալին այն է, որ թեև աւորիները հայերից շատ ավելի վաղ ունեին իրենց գրերը, բայց նրանց դատաստանագիրքը ստեղծվել է ոչ թե ասորերեն լեզվով, այլ թարգմանվել է հունարենից։

Մեր դատաստանագրքի առանձին հոդվածներում (14, 26, 44, 90, 93) գտնում ենք երկու արաբական իրավաբանական տերմիններ՝ ումուն (արաբ. ramun) — գրավական և մահր (արաբ. mahir) — կնոջ վարձագին (տուար, վարձանք), որոնք, հավանաբար, դատաստանագիրք են թափանցել արաբական տիրապետության շրջանում՝ VII դարի կեսերից հետո։

Մեղ թվում է, որ դատաստանագիրքը թեև նախապես գրվել է հունարեն լեզվով, բայց չի հաստատվել կայսրության հոռմեացի և հույն աղգաբնակչության համար։ Բանն այն է, որ Բյուզանդիան ճանաչված էր հունական արևելք. ուր իշխում էին հունական ավանդույթները։ Հույները կազմում էին կայսրության ամենամեծաթիվ ժողովուրդը։ «Հունարեն լեզուն դարձել էր ամենատարածվածը, իսկ հույները՝ փաստորեն իշխող ժողովուրդը»²⁷։ Կայսրությունը Կոստանդիանոս Մեծի ժամանակ ուներ հարուստ և մշակված օրենսդրություն, որով ղեկավարվում էին ողջ հունական աղգաբնակչությունը և կայսրության բազմաթիվ փոքրաթիվ ժողովուրդները։ Այդ օրենսդրությունն ավելի է զարգացվում և խորացվում հետագա կայսրերի օրոք, իսկ Հուստինիանոսի շրջանում այն հասցվում է զարգացման գագաթնակետին։ Այսպիսի պայմաններում մեղ միանգամայն անհավանական է թվում հույների համար առանձին, իրավական տեսակետից անկատար օրինագիրք ստեղծելը։

Բրունսը հավանական չի համարում դատաստանագիրքը հույների կողմից գրված լինելը։ Նա ուղղակի նշում է, որ այն «Հունաստանում չի գրվել»։ Այն հանգամանքը, որ դատաստանագրքում «Կոստանդինապոլիսը» համարվում է արևմտյան քաղաք, ցույց է տալիս, որ դատաստանագիրքն ունի ոչ թե հունական, այլ արևելյան ծագում։ Բրունսը գտնում է, որ հիմնական վարկածը, որը հունարենի դեմ է խոսում՝ գրելու ձևն է։ Մենք չենք կարող հավատալ, ասում է նա, որ աղգության հույն իր մայրենի լեզվով այդ ոճով արտահայտվելու նի՞ դա մեղ մղում է այն բանին, որպեսզի հավանական կարծենք, որ աղբյուրը բարգմանվել է ասորերենից հունարեն (ընդգծումը մերն է — Ս. Հ.)։ Եվ դա վերաբերում է ողջ շարագրանքին, որը հունարենին հատուկ չէ²⁸։ Այստեղ Բրունսը

²⁵ «Ղազարայ Փարպեցու Պատմության Հայոց և թուրք առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1907, էջ 27, 29։

²⁶ «Հայերեն բացատրական բառարան», Ե., 1945, հատ. 4, էջ 435։

²⁷ «История Византии», т. I, М., 1967, էջ 71։

²⁸ SRR, էջ 326։

ընկնում է հակասության մեջ: Դատաստանագրքի լոնդոնյան ձեռագրից նրան քաջ հայտնի էր, որ Ասորական դատաստանագիրքը քարգմանվել է հունարեն-նից: Առողջ բանականությանը հակառակ է այն կարծիքը, որ այդ դատաստանագիրքը նախ ստեղծվել է ասորերեն, ապա այն թարգմանվել է հունարեն, իսկ վերջինից էլ՝ ասորերեն:

Բայց զո՞ւցե դատաստանագիրքն ունի հոռմեական ծագում: Այս պատկերացումը լուրջ հիմքեր չունի: Բրունսը նկատել է, որ դատաստանագիրքը գրված է Արևելքի երկրների տեսանկյունից ելնելով, ուստի լատինացի հեղինակի առկայությունը բացառվում է: Նա գտնում է, որ դատաստանագրքի գրելու ձևը և կառուցվածքը լատինական լինել չի կարող, որովհետև եթե լատինացի լինեք գրողը՝ նա հարադատ կմնար լատինական աղբյուրներին²⁹:

Ամփոփելով դատաստանագրքի կամ «Արէնք յաղթող թագաւորաց...»-ի լեզվի մասին մեր մի քանի դիտողությունները, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ մեր մասնագիտական հետաքրքրություններից դուրս է եղել նրա լեզվական բաղմակողմանի հետազոտությունը (ի դեպ, նշենք, որ այն առ այսօր չի ուսումնասիրվել բանասերի և լեզվաբանի կողմից): Մենք սահմանափակվել ենք իրավական հետազոտությամբ, որը մեզ թույլ է տալիս ենթադրելու, որ ի դեմս «Արէնք յաղթող թագաւորաց...»-ի մենք գործ ունենք V դարից առաջ ստեղծված վավերական իրավական հուշարձանի հետ, որը շատ գծերով հարադատություն ունի IV և նախորդ դարերի կյանքի և իրավահայեցողության հետ: Լեզվական և բանասիրական մանրակրկիտ հետազոտությունից հետո միայն (որը թողնում ենք համապատասխան մասնագետներին) կարելի կլինի վերջնականապես եզրակացնել, թե որքանով են հիմնավորված մեր ենթադրությունները:

Խոսելով ասորական դատաստանագրքի հայկական տարբերակի կաղմըվելու ժամանակի և շարժառիթների մասին, բավարար ապացույցների բացակայության պատճառով լոկ կարող ենք ենթադրաբար կարծիք հայտնել, որ դատաստանագիրքը հաստատվել է IV դարի 20—30-ական թթ.՝ Կոստանդինոս Սեծի օրոք և նախապես կրել է միայն նրա անունը: V դարում, երբ դատաստանագիրքը հարստանում է Թեոդոս II-ին և Լևոն I-ին վերագրված մի քանի հոդվածներով, փոխվում է նաև նրա վերնագիրը, ընդունելով մեզ հասած ձևը: Հնարավոր է, որ այդ բանի համար փոքր նշանակություն չեն ունեցել Հայաստանի քաղաքական դրությունը և այն հույսերը, որ հայերը կապում էին այդ կայսրերի հետ:

²⁹ Նույն տեղում, էջ 324—325:

ОТНОШЕНИЕ ЗАКОННИКА, НАЗВАННОГО «СИРИЙСКИМ»
ИЛИ «СИРО-РОМЕЙСКИМ», К АРМЯНСКОМУ ПРАВУ

С. А. ОГАНЕСЯН

(Резюме)

Армянские редакции этого законника, дошедшие до нас более чем в 50 рукописях (древнейшие из которых датируются XIII—XIV вв.), носящие заглавие «Законы победивших христианских царей—Константина, Феодосия и Льва, царей ромейских», недостаточно изучены с точки зрения армянского права. В данной статье армянские и сирийские редакции этого законника подвергаются историко-правовому разбору. Правовой анализ армянской и сирийской редакций законника (система, построение, количество, соединения, разъединения, прояснения и дополнения статей, а также правовой анализ содержания статей и т. д.) дает основание думать, что первичной является армянская редакция законника. Высказывается мнение, что в основе законника Византийской Армении положены главным образом законы, действовавшие в аршакидской Армении, армянское обычное и каноническое право, что основы армянской редакции были заложены в 20—30-х годах IV в. на греческом языке (ввиду отсутствия армянской письменности), что этот законник был создан для нужд присоединенных к Византии армянских провинций, после создания армянской письменности переведен на армянский язык, а в период царствования Юстиниана претерпел ряд изменений.

Армянская редакция законника—ценнейший первоисточник для изучения армянского права эпохи раннего феодализма.